ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<<01>> <<հոկտեմբերի>> 2021թ. N 152-Ա

ք.Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N 1776-Ա հրամանը՝

Որոշում եմ

1. Հաստատել 2021 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03 հրամանով հաստատված հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ 2021 թվականի չորրորդ եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

10/1/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2021
թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 152-Ա որոշման

2021 թվականի չորրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ	Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
4-րդ եռամսյակ					
1	Վայք	18.10.2021թ.-29.10.2021թ.	Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների բնագավառ	ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար	Աղվան Հարությունյան
				Սոցիալական ապահովության և առողջապահության վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Ցողիկ Բաբայան,
				Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Լյուսյա Պողոսյան

				Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ	Վանիկ Խուդավերդյան
				Հողաշինության և հողօգտագործման բաժին մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Սմբատ Խլխաթյան
				Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Գոհար Խաչատրյան
				ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ	Ռուստամ Զոհրաբյան
				Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ	Արամ Կոստանյան
				Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Աղասի Հովհաննիսյան
				Կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ	Անահիտ Մխիթարյան

Լիլիա Խաչատրյան	Առողջապահության և սոցիալական տեսչության տեղական մարմնի պետ՝ Լուսինե Սեդրակյան		
Ռուբիկ Միքայելյան	Քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քննիչ՝ Սամվել Սեդրակյան		
Խաչիկ Սալբակյան	Քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ճարտարապետաշինարարական և վերակառուցման բաժնի պետ՝ Յուրա Սեդրակյան		
Նարինե Մաղաքյան	Իրավաբանական բաժնի պետ՝ Աշոտ Սեդրակյան		
Անահիտ Սարգսյան	Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ աշխատակազմի խմբի ավագ Յուրա Սեդրակյան		